



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

”11” հոկտեմբեր 2013 թ.

թիվ 57 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՁԵՎ ԹԻՎ 8 ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել՝

«ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում հաշվառման տեղամասի ամփոփ տեղեկագիրը»՝ համաձայն հավելվածի:

Ցուցումներ հաշվառման տեղամասի ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Հաշվառման տեղամասի ամփոփ տեղեկագիրը (Ձև թիվ 8) լրացնում է հաշվառման տեղամասի վարիչն իր տեղամասի հրահանգիչ-հսկիչներից փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերն ընդունելուց հետո: Ամփոփ տեղեկագրի աջ անկյունում լրացվում է հաշվառման տեղամասում ներառված հրահանգչական տեղամասերի քանակը, իսկ հասցեամասում՝ հաշվառման տեղամասի համարը:

2. Եթե մեկ հաշվառման տեղամասի մեջ ներառված են և՛ քաղաքներ, և՛ գյուղեր, ապա լրացվում են երկու տեղեկագրեր՝ մեկը քաղաքների, մյուսը՝ գյուղերի համար:

Հաշվառման տեղամասի ամփոփ տեղեկագրում լրացվում են տեղեկություններ յուրաքանչյուր քաղաքի և գյուղական համայնքի վերաբերյալ:

3. Եթե քաղաքային համայնքին ենթակա է (են) գյուղական բնակավայր (եր), ապա այդ բնակավայր(եր)ի վերաբերյալ հանրագումարները պետք է ներառվեն գյուղական ամփոփ տեղեկագրում: Բոլոր այդպիսի դեպքերի համար համապատասխան նշում է կատարվում քաղաքային ամփոփ տեղեկագրի դիմային էջի «Ծանոթություն» տողում:

4. Եթե քաղաքները և գյուղերը բաժանված են երկու և ավելի հրահանգչական տեղամասերի, ապա նախ գրառվում են տվյալ բնակավայրի հրահանգչական տեղամասի հանրագումարները, այնուհետև՝ առանձնացվում են հանրագումարներն ըստ յուրաքանչյուր բնակավայրի:

5. Եթե մեկ հրահանգչական տեղամասը ներառում է մի քանի գյուղական համայնքներ, ապա նախ գրառվում են տվյալ հրահանգչական տեղամասի յուրաքանչյուր բնակավայրի կամ յուրաքանչյուր գյուղական համայնքի հանրագումարները, հետո՝ ամբողջ հրահանգչական տեղամասի հանրագումարները:

6. Հաշվառման տեղամասի ամփոփ տեղեկագիրը (Ձև թիվ 8) լրացվում է հրահանգչական տեղամասերի (Ձև թիվ 7) համապատասխան տվյալների ամփոփման եղանակով, ընդ որում Ձև թիվ 8-ի «Հաշվառված է հաշվարարների կողմից» 1-ին բաժնում պետք է գրառվեն Ձև թիվ 7-ի առաջին բաժնի համապատասխան տվյալները, իսկ 2-րդ բաժնում՝ «Հանրագումարը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը» Ձև թիվ 7-ի 2-րդ բաժնի տվյալները:

7. Հաշվառման տեղամասի ամփոփ տեղեկագրի «Վերահսկիչ շրջայցի արդյունքների ամփոփագիր» բաժինը լրացվում է հրահանգչական տեղամասերի ամփոփ տեղեկագրերի նույն բաժնի համապատասխան տվյալների հանրագումարների հիման վրա:

8. Կազմված ուղեկցող թերթերի քանակի վերաբերյալ տվյալները ստացվում են հրահանգչական տեղամասերի ամփոփ տեղեկագրերի համապատասխան տվյալների հանրագումարների հիման վրա:

9. Հանդգվելով, որ փաստաթուղթը ճիշտ է կազմված՝ հաշվառման տեղամասի վարիչը գրում է ամսաթիվը և ստորագրում փաստաթուղթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Հայաստանի Հանրապետության 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում

Հավելված Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 57-Ա որոշման

քաղաքային

Ձև թիվ 8-----*(որը պետք չէ ջնջել)*

գյուղական

Հաշվառման տեղամասում ներառված հրահանգչական տեղամասերի քանակը

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Տ Ե Ղ Ա Մ Ա Ս Ի Ն-----

Մարզ-----Տարածաշրջան-----

Քաղաք----- Գյուղական համայնք-----

Վ Ե Ր Ա Հ Մ Կ Ի Չ Շ Ր Ջ Ա Յ Ց Ի Ա Ր Դ Յ ՈՒՆ Ք Ն Ե Ր Ի Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Փորձնական գյուղատնտեսական հաշվառման ժամանակ հաշվարարի կողմից սխալ գրառումներ են կատարվել տնտեսության գյուղատնտեսական նշանակության հողերի և/կամ գյուղատնտեսական կենդանիների վերաբերյալ տեղեկատվության լրացման ժամանակ										
Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հա</i>					Գյուղատնտեսական կենդանիներ, <i>գլուխ / հատ</i>					
Վարելահող	Պտղատու այգի և հատապտղանոց	Խաղողի այգի	Խոտհարք	Արոտավայր	Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը	որից՝ կովեր	Խոզեր, ընդամենը	Ոչխարներ, ընդամենը	Այծեր, ընդամենը	Թռչուններ, ընդամենը
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.

Ընդամենը կազմվել է Ուղեկցող թերթ (Ձև թիվ 10)-----

Ծանոթություն-----

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ

Հրահանգչական տեղամասի համարը	Քաղաքային, գյուղական համայնքների անվանումը	Հաշվային տեղամասերի քանակը	Ամփոփ տեղեկագրերի քանակը		Լրացված հաշվառման հարցաթերթի քանակը	Լրացված հարցաթերթերի հավելվածների քանակը	ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ (տվյալ համայնքում / բնակավայրում)										
			Ձև թիվ 6	Ձև թիվ 7			Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հա</i>					Գյուղատնտեսական կենդանիներ, <i>գլուխ / հատ</i>					
							Վարելահող	Պտղատու այգի և հատապտղանոց	Խաղողի այգի	Խոտհարք	Արոտավայր	Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը	որից՝ կովեր	Խոզեր, ընդամենը	Ոչխարներ, ընդամենը	Այծեր, ընդամենը	Թռչուններ, ընդամենը
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>	<i>10.</i>	<i>11.</i>	<i>12.</i>	<i>13.</i>	<i>14.</i>	<i>15.</i>	<i>16.</i>	<i>17.</i>	<i>18.</i>

1. ՀԱՇՎԱՌՎԱԾ Է ՀԱՇՎԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ընդամենը																	

2. ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱՅՑԸ

Ընդամենը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը																	